ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Ղահրաման» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ. Հասանյան

Հարգելի Մ. Հասանյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի(այսուհետ՝ Գնորդ) և «Ղահրաման» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **21.01.2022թ.**-ին կնքվել է **ԱՔ-Թ10ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1-2** ծածկագրով Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

22.02.2022թ.-ին Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք պայմանագրի հավելված 1-ում ներառված 37-րդ չափաբաժնի(Թթվասեր) հետագա մատակարարումից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, **«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը** հարկադրված է 2022թ. փետրվարի 25-ից Պայմանագիրը նշված ապրանքի մատակարարման չկատարված մասով մասնակի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվեն որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Ղահրաման» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 գիշերօթիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրեն՝ **Ա. Պարոնան**

Կ.Տ.

Сканировано с CamScanner